

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ԵՐԿԵՐԻ ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆ ՎԵՐՁԻՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ*

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Առանձնահատուկ են 5-րդ դարի Հայ մատենագրության խոշոր ներկայացուցիչ, հմուտ ճարտասան Ղազար Փարպեցու երկերի լեզուն և ոճը: Ականավոր պատմիչը ոչ միայն նկատի է ունեցել գրաբարի հարուստ բառադանձը և զանազան ոճեր, այլև կազմել է նոր բառեր, գործածել ժողովրդախոսակցական, լեզվաոճական ինքնատիպ ձևեր: Գրաբար բնագիրն այսօրվա ընթերցողի և ուսումնասիրողի համար ներկայացնում է որոշակի դժվարություններ, իսկ այս դեպքում էական դեր պետք է ստանձնի բնագրի ճշգրիտ և ճաշակով կատարված թարգմանությունը, իսկ եթե վերջինս պարունակում է էական անճշտություններ և աղավաղումներ, գործը բարդանում է...

Իսկապես, Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ի և «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» աշխատությունների հրատարակման և դրանց նորովի թարգմանության կարիքն այսօր էլ զգացվում է, քանի որ նախորդ թարգմանությունները¹ բավականին հնացել են, իսկ դիտական բնագիրը՝ դար-

* Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1982, թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, 537 էջ. տպաքանակ 10.000: Սույն թարգմանության խաթատումները վերաբերյալ գրված իմ կարծիքը (05.03.83 թ.) ժամանակի հանգամանքների բերումով և որոշ մարզկանց ջանքերով այդպես էլ չտպագրվեց: Տարիներ անց (06.07.1990 թ.) «Հայաստան» հրատարակչությունը, ի դեմս տնօրեն Ն. Ղազարյանի, թարգմանչի և ինձ հետ կնքեց «Տիպային համաձայնագիր», ըստ որի ես ինքս տպագրվելիք այդ երկու աշխատությունների թարգմանությունը՝ 20 հեղինակային մամուլ ծավալով, ամիսների ընթացքում համեմատեցի գրաբար բնագրի հետ և խմբագրեցի՝ կատարելով հարյուրավոր ուղղումներ, ստորագրեցի, որ պատրաստ է տպագրության ու հանձնեցի թարգմանության հեղինակին՝ Բ. Ուլուբաբյանին, որը փոխանցեց հրատարակիչներին, բայց երկու հանգամանք խանգարեց ճշգրտված, թարգմանչի և խմբագրության հավանության արժանացած ձեռագրի տպագրությանը. փյուզվեց խորհրդային հրատարակչական համակարգը, իսկ այնուհետև, դժբախտաբար, վախճանվեց Բ. Ուլուբաբյանը: Վերջերս «Հայաստան» հրատարակչությունը ցանկացավ տպագրել այդ աշխատությունները, սակայն ձեռագիր օրինակն այդպես էլ ի հայտ չեկավ: Այնուամենայնիվ, դրանով հարցը չլուծվեց, քանի որ «Ուսանողի գրադարան» մատենաշարով տարիներ առաջ գրաբար-աշխարհաբար հանդիպարությունը լույս տեսած և պատմական ու աղբյուրագիտական առումով մեծ արժեք ներկայացնող այդ աշխատությունների սխալաշատ թարգմանությունը Հայոց պատմություն, Հայ հին գրականություն և գրաբար սովորող ուսանողների շրջանում (և ինչո՞ւ միայն նրանց) առ այսօր ստեղծում է թյուրիմացություններ: Ահա թե ինչու գրաբար բնագրի աշխարհաբար թարգմանության որոշ աղավաղումներ ներկայացրի Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի 85-ամյակին նվիրված գիտական նստաշրջանին (21.12.2004 թ.), որտեղ խորհուրդ տրվեց առանձին հոդվածով կամ գրքուկով տպագրել պատմագիտական և բնագրային արժեք ներկայացնող փաստերի աղավաղումների վերաբերյալ մեր ճշգրտումները:

Ղազարյանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1982, թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, 537 էջ. տպաքանակ 10.000: Սույն թարգմանության խաթատումները վերաբերյալ գրված իմ կարծիքը (05.03.83 թ.) ժամանակի հանգամանքների բերումով և որոշ մարզկանց ջանքերով այդպես էլ չտպագրվեց: Տարիներ անց (06.07.1990 թ.) «Հայաստան» հրատարակչությունը, ի դեմս տնօրեն Ն. Ղազարյանի, թարգմանչի և ինձ հետ կնքեց «Տիպային համաձայնագիր», ըստ որի ես ինքս տպագրվելիք այդ երկու աշխատությունների թարգմանությունը՝ 20 հեղինակային մամուլ ծավալով, ամիսների ընթացքում համեմատեցի գրաբար բնագրի հետ և խմբագրեցի՝ կատարելով հարյուրավոր ուղղումներ, ստորագրեցի, որ պատրաստ է տպագրության ու հանձնեցի թարգմանության հեղինակին՝ Բ. Ուլուբաբյանին, որը փոխանցեց հրատարակիչներին, բայց երկու հանգամանք խանգարեց ճշգրտված, թարգմանչի և խմբագրության հավանության արժանացած ձեռագրի տպագրությանը. փյուզվեց խորհրդային հրատարակչական համակարգը, իսկ այնուհետև, դժբախտաբար, վախճանվեց Բ. Ուլուբաբյանը: Վերջերս «Հայաստան» հրատարակչությունը ցանկացավ տպագրել այդ աշխատությունները, սակայն ձեռագիր օրինակն այդպես էլ ի հայտ չեկավ: Այնուամենայնիվ, դրանով հարցը չլուծվեց, քանի որ «Ուսանողի գրադարան» մատենաշարով տարիներ առաջ գրաբար-աշխարհաբար հանդիպարությունը լույս տեսած և պատմական ու աղբյուրագիտական առումով մեծ արժեք ներկայացնող այդ աշխատությունների սխալաշատ թարգմանությունը Հայոց պատմություն, Հայ հին գրականություն և գրաբար սովորող ուսանողների շրջանում (և ինչո՞ւ միայն նրանց) առ այսօր ստեղծում է թյուրիմացություններ: Ահա թե ինչու գրաբար բնագրի աշխարհաբար թարգմանության որոշ աղավաղումներ ներկայացրի Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի 85-ամյակին նվիրված գիտական նստաշրջանին (21.12.2004 թ.), որտեղ խորհուրդ տրվեց առանձին հոդվածով կամ գրքուկով տպագրել պատմագիտական և բնագրային արժեք ներկայացնող փաստերի աղավաղումների վերաբերյալ մեր ճշգրտումները:

Ղազար Փարպեցու դրած թուղթը, մեղադրություն ստախոս աբեղաներին, թարգմանություն և բացատրություն Մ. Նալբանդեանցի, տպագրություն Մ. Տէր-Գրիգորեանցի, Ս. Պետերբուրգ, 1868: Ղազար Փարպեցու Պատմությունը և Վահան Մամիկոնյանին գրած թուղթը: Թարգմանեց Մինաս քահանա Տէր-Պետրոսյանցը, Ալէքսանդրապոլ, 1895:

² Ղազարյան Փարպեցույ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատասիրութեամբ Գ. Տէր-Մկրտչեանի և Ստ. Մալխասեանի, Տիֆլիս, 1904:

ձեւ է մատենագիտական հազվագյուտ օրինակ:

Ի տարբերություն նախորդների, նոր թարգմանչի տրամադրության տակ են եզել պատմիչի երկերի ամենայն բարեխղճութամբ կազմված գիտական բնագիրը, Համաբարբառները, առկա են նորակա ուսումնասիրություններ, հրապարակումներ, ճշգրտումներ, ստեղծված է նաև Հայ մատենագիրների գործերի աշխարհաբար թարգմանելու հիանալի ավանդույթ: Սակայն Բ. Ուլուբաբյանը միշտ էլ, որ լավագույնս է օգտվել այս առավելություններից:

Կարծում ենք, Հայ պատմիչների դործերը և որևէ դեղարվեստական ստեղծագործություն թարգմանելիս չի կարելի ցուցաբերել միևնույն մոտեցումը: Պատմագիտական և աղբյուրագիտական կարևոր արժեք ներկայացնող երկերը թարգմանելիս առավել մոտ ու հարազատ պետք է մնալ բնագրին՝ անհրաժեշտաբար արվող հավելումներն ու կրճատումները հայտնի դարձնելով կա՛մ ծանոթագրումներով, կա՛մ հատուկ նշաններով: Մինչգեռ Բ. Ուլուբաբյանն ընթացել է այլ ուղիով: Նա ցանկացած պահին բնագիրը կրճատել է, հավելում կատարել՝ առանց համապատասխան նշում անելու: Այսպես, տեղ-տեղ չեն թարգմանվել անհրաժեշտ բառեր, բառակապակցություններ: Օրինակ՝

ԲՆԱԳԻՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

էջ 120

Բայց ժողովուրդքն Հայոց, Վրաց և Աղուանից յոյժ շատ են և առաքինի,³

էջ 138

Բազմաժամանակեայ կարևոր⁴ կապանաց և բանդից գիպեալք

էջ 140

Գնալ ի բաց և փախչել չիչխէին:

էջ 158

...չուեցին միաբան ամենեքեան յաշխարհէն Աղուանից յերկիրն Հայոց ի գաւառն Այրարատոյ:

էջ 121

Բայց Հայոց, Վրաց և Աղվանից ժողովուրդներն ավելի շատ են, (Բաց է թողնված առաքինի բառը):

էջ 139

Բազմաժամանակյա կապանքների ու բանտարկությունների ենթարկվելով: (Թարգմանությունում չկա կարևոր բառը):

էջ 141

Վախենում էին փախչել (փխ. հեռանալ և փախչել չէին համարձակվում):

էջ 159

Բոլորը միասին Աղվանից աշխարհից գնացին Այրարատյան գավառը: (Թարգմանությունում տեղանքի անվանման պակաս կա):

Կան բնագրային հատվածներ, որոնք առհասարակ չեն թարգմանված: Օրինակ՝

քանզի էր քան դքան...⁵

...և պարտեալ եռանդեանն չարութիւնն՝ անդէն և անդ դադարեալ ցած-

³ Այս և հետագա ընդգծումները մերն են – Գ. Մ.:

⁴ «Նոր Հայկազեան բառարան»-ը (այսուհետև՝ ՆՀԲ) կարևոր (սաստիկ, չարաչար) բառի համար բնագրային վկայություն է բերել (հ. Ա, էջ 1068) Փարպեցու երկի այս տողից:

⁵ Գրաբար բնագիրը կազմողները նշել են (էջ 6, տողատակի ծան.), որ կախման կետերի տեղում պակաս կա:

նուն: Այսպես և բան հզորին Աստուծոյ վճարէ զամենայն զոր կամի. ցասուցեալ ըստ չարի մեր գործոց՝ խրատէ ոգոքեալ. զբարի դարձ տեսանելով՝ ոգորմի փութով (էջ 16):

Արդ՝ գրեցուք զտեսիլն, որ են բանք Հօր եւ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ եւ Հոգւոյն սրբոյ (էջ 66): Ամբողջ մի բարդ նախադասութիւն աղակազգիւ է հետեյալ բացթողումի հետեանքով. «...և նոքա, նման չրէիցն, Պիղատոսի զօրուն հրամայէին պահել զգերեզմանն...» (էջ 222): Նման աղակազգիւ է առաջացել նաև այն մասում, որտեղ բաց է թողնված հաղթանակած հայ քաջերին Հոհան կաթողիկոսի հետեյալ ասածը. «...տեսանելով զԱստուած հաշտ ընդ ձեզ. քանզի յաղթութիւնս խնդացուցանէ զիս, այլ ևս առաւել բերկրիմ...» (էջ 316):

Գիտական բնագրում (էջ 185) գրված է. «Յառաջտբան թղթոյս առաքեալ յԱմիթ քաղաքէ»: Արտատպված գրաբար բնագրում (էջ 444) և թարգմանութիւնում (էջ 445) գրված է միայն Առաջաբան, մինչդեռ թղթի՝ Ամիթ քաղաքից ուղարկված լինելու բնագրային փաստը կարևոր է և պիտի արտացոլվի թարգմանութիւն մեջ:

Չի թարգմանված 379 էջի մի հատված՝ ... և զամենայն արս աւագս և զայլ մարդիկն որ ի Վրկանին էին՝ փախուցին յԱսորեստան:

Բնագիր, էջ 438.

...և մի՛ տայք թոյլ նոցա ընդ Ադոնեայ և ընդ Յովաբայ՝ զեղջերաց սեղանոյն բուռն հարկանել, [որ է անգամ մարմին, անբեղուն ըստ բուսոյ և անհամ ըստ ճաշակոյ, յուներէն]:

Փարպեցու երկի բնագրի նախորդ հրատարակիչներն այս տեղը համարել են պակաս, հետագայում՝ խառնակված, իսկ գիտական բնագիր կազմողներն այս հատվածը գրել են փակագծերում: Սակայն ՆՀԲ-ի մեծատաղանդ՝ հեղինակները վաղուց կանխել են վեճը՝ իրենց բացատրութեամբ ցույց տալով, թե գա ինչ է նշանակում: Բառգրքի Յուներէն գլխաբառի տակ բերված է Փարպեցու այս օրինակը՝ հետեյալ բացատրութեամբ. «Իբր զի յունարէն Գեուաս է եղջիւր և Գեուադիօն՝ սլտուղ եղջերենույ» (Հատ. Բ, էջ 375): Հետեաբար, պետք է կարծել, որ փակագծերում եղածը հեղինակային է, այլ հետագա հավելում է. հավելողը շփոթել է եղջիւր (որպես կենդանու մարմնի մաս) և եղջերենի կամ եղջիւրենի («Գ. Ծառ և սլտուղ, որ և ասի եղջիւր», ՆՀԲ, Բ, էջ 656) ձևով նույնը, իմաստով տարբեր (նույնանուն) բառերը: Թարգմանիչը փակագծերում եղած այս հատվածը ոչ միայն չի թարգմանել, այլև չի ծանոթագրել:

Գիտական բնագիր կազմողները երկու տարբեր փակագծեր են գործածել. կլոր փակագծերով առանձնացրել են իրենց ավելացրած ոչ բնագրային բառերը, իսկ անկյունավոր փակագծերում վերցրել են ձեռագրում եղած, բայց իրենց կարծիքով ընդմիջարկութիւն հանգիսացող բառերը (էջ ԺԲ): Մինչդեռ թարգմանիչը գրանք կամ փակագծերից հանել է, կամ էլ երբեմն բոլորը, այդ թվում նաև իր հավելումները գրել է միայն կլոր փակագծերում: Այսպես, ինքն ավելացրել է նա իր կյանքը՝ գրանք վերցնելով կլոր փակագծերում (էջ 483), մինչդեռ մեկ այլ տեղ (էջ 267) իր ավելացրած կարոտ խնամքի ու գաստիարակութեան բառերն առանց որևէ նշումի միացրել է բնագրին:

Գրաբար բնագրի մեկ էջում (էջ 438) չորս տեղ գրված են անկյունավոր փակագծեր, թարգմանիչն ընդմիջարկություն կարծված հատվածներից միայն մեկն է վերցրել, իհարկե, կլոր փակագծերում, երկուսի փակագծերը չկան, մյուսն էլ (որ է անդամ մարմին, անբեղուն ըստ բուսոյ և անհամ ըստ ճաշակոյ, յուներէն), ինչպես ասվեց, առհասարակ չի թարգմանել:

Նա առանց որևէ նշումի իր թարգմանությունից որևէ բառ, դարձված դուրս թողնելով կամ բնագրին ավելացնելով՝ ստեղծել է Փարպեցու գրածի աշխարհաբարյան մի նոր տարբերակ:

ԲՆԱԳԻՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

էջ 52

Քանզի եկեալ հասեալ էր ի վերայ նոցա նզովք սրբոյ առն Աստուծոյ Ներսէսի՝ անկանել նոցա ընդ լծով չտր ծառայութեան հեթանոսաց, և ոչ գաղարէր մինչև ի գլուխ զգործն հանէր:

էջ 53

Որովհետե եկել, նրան էր վրա հասել սուրբ Ներսեսի անեծքը, թե նրանք ընկնելու են հեթանոսների չար ծառայության լծի տակ... Եվ քանի գործը գլուխ էր բերել, չէր հանգստանում սուրբ կաթողիկոս Սահակը:

Այստեղ հավելումն անտեղի է և սխալ, քանի որ խոսքը ոչ թե վերաբերում է Սահակ կաթողիկոսին, այլ Ներսես Մեծի անեծքին, որը և չէր առնում դադար, քանի գործը (անեծքում ասվածը) ավարտին չէր հասցնում: Այդ մասին է ասվում նաև մի քանի էջ հետո. «Եւ կատարեալ ել ի գլուխ բանն անիծից մեծի քահանայապետին Ներսէսի» (էջ 58):

ԲՆԱԳԻՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

էջ 302

Հայրանման Կամսարականն Ներսեհ

էջ 303

հերոսական Ներսեհ Կամսարականը

էջ 370

Եւ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան, հանդերձ ընդ իւր միասիրտ սակաւ արամբք, օգնութեամբ աջոյ հզօրին յարձակեալ՝ հերձանէր դրովանդակ դունդն Պասից, որպէս յորգահասանք բազմութիւնք շրոց, որ հեղեղատեն զերկիր և անցանեն:

էջ 371

Իսկ Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը, իր հետ դռնված սակավ մարդկանցով, Աստծո աջի օգնությամբ հարձակվելով ճեղքեց Պարսից ամբողջ դունդը, իբրև հորդահոս հեղեղ, որ գալիս սլատում է երկիրը և դնում:

Ձի թարգմանված միասիրտ բառը (սըտակից, մեկ սիրտ՝ մեկ հոգի, համակամ), հեղեղատել⁶ (հեղեղատել, քանդել, հեղեղել) դարձել է սլատել: Երկիր բառը, որն այստեղ հող, գետին է նշանակում, մնացել է անփոփոխ: Պատկերն աղճատվել է, չափազանցությունը դարձել է անբնական. այդ ի՞նչ հեղեղ է, ինչպե՞ս է երկիրը պատում և դնում:

Թարգմանիչը հեղինակային ղրաբարյան բառերը նույնությամբ սլահելիս շատ է սայթաքել, քանի որ գրաբարյան բազմաթիվ բառեր ու բա-

⁶ ՆՀԲ-ն միասիրտ (հ. Բ, էջ 272) և հեղեղատել (հ. Բ, էջ 83) գլխաբառերի համար օրինակներ է քաղել Փարպեցու երկի սույն տողերից:

ուսմանը համարվում է իրականում իմաստափոխության հետևանքով այլևս ժամանակակից հայերենում նույնությամբ կիրառել հնարավոր չէ:

ԲՆԱԳԻՐ	ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ	ՊԵՏՔ Է ԼԻՆԻ
էջ 8 բանաւոր հօտ	էջ 9 բանավոր հոտ	բանական հոտ
էջ 88 բանաւորքս	էջ 89 բանավորները	այս բանականները
էջ 104 ամենայն բանաւորաց	էջ 105 բոլոր բանավորների համար	բոլոր բանականների (համար)
էջ 22 խօզակեր ...հաւքն	էջ 23 խոզակեր... թռչուններ	չրիմուռակեր... թռչուններ

Փարպեցին, նկարագրելով Արարատյան դաշտավայրը, գրել է, որ այնտեղ կան «այլ և զջրասուզակ մամուռներ ի խՕզակեր մեծանձունք և յաղթամարմինք հաւքն, փորն և թանձրն և սագն ...» (էջ 22): Թարգմանիչը չի նկատել, որ խօզակեր բառը գրված է օ տառով, ոչ թե ո-ով, իսկ այս խօզակերը, որը չկա ՆՀԲ-ում և Առձեռնում, կա Աճառյանի Արմատականում և Մալխասյանցի բառարանում և նշանակում է ոչ թե խոզ ուտող հավքեր, սագեր, այլ մամուռներ, չրիմուռակեր հավքեր, սագեր: Այլապես թարգմանությունից ստացվում է, որ իբրև թե 5-րդ դարում Արարատյան դաշտավայրում եղել են խոզ ուտող խոզակեր հավքեր, սագեր և այլ թռչուններ:

էջ 34 ...անցանէ յԵդեսիա առ Պղատոս ոմն ճարտասան հեթանոս, իշխան դիւանին:	էջ 35 ...անցավ Եդեսիա, այնտեղի դիւանի իշխան Պղատոս անունով մի հեթանոս ճարտասանի մոտ:	Իշխան այստեղ նշանակում է պետ ⁷ , վերակացու, դիւանավոր, (ՆՀԲ, Հատ. Ա, էջ 864):
էջ 76, 116 Բանն Աստուած	էջ 77, 117 Բանն Աստված	Աստծո Որդին (Հմմտ. էջ 223)

էջ 138 կամ չհստատեալ ապստամբել իշխանն Սիւնեաց Վասակ մեռանի յիւրոցն ընկերաց անարժան մահուամբ:	էջ 139 Սյունյաց Վասակ իշխանը կամ չհամաձայնելով ապստամբել կմեռնի իր ընկերների անարժան մահով:	Մինչդեռ այն նշանակում է՝ դաժանաբար կսպանվի իր ընկերների կողմից:
---	--	---

Այստեղ ներկայացված են ատելություններ լցված վահան Ամատունու մտորումները: Եթե Վասակ Սյունին չհամաձայնի ապստամբել, կսպանվի

⁷ Հմմտ. Մ. Խոսեցի, Հայոց պատմություն, Երևան, 1961, էջ 325: Ստ. Մալխասյանցն իշխան դիւանին իրավացիորեն թարգմանել է դիւանի պետ:

իր ընկերների կողմից, իսկ եթե համաձայնի՝ կվտանգի պարսկական արքունիքում պատանդ վերցված իր երկու որդիներին:

Ասենք նաև՝ նախդրագործածության իմաստները ճիշտ չբացահայտելու հետևանքով ևս թարգմանությունում սպրգել են այսպիսի սխալներ, մինչդեռ այժմ, ի թիվս այլ աշխատությունների, առկա է նախգիրների կիրառության վերաբերյալ մեկ այլ ուսումնասիրություն⁸:

էջ 152

խրախալից մտօք փառաւորէր

էջ 290

Եւ մատուցեալ¹⁰ յառաջ արբոյ քահանային, որում անուն էր Աթիկ... և բերեալ սուրբ Աւետարան՝ ողջունէին ամենեքեան, և եղեալ իւրաքանչիւր ուրուք ձեռս ի վերայ ասէին.

էջ 153

խրախալից⁹ սրտով փառք տվեց

էջ 291

Եվ առաջ մատուցանելով Աթիկ անունով սուրբ քահանային... ողջունեցին բոլորին..., ապա յուրաքանչյուրն իր ձեռքը դրեց Ավետարանի վրա,

ՊԵՏՔ Է ԼԻՆԻ

ուրախալից մտքով փառք տվեց

Եվ առաջ դալով Աթիկ անունով սուրբ քահանան... և բերեց (բերելով) սուրբ Ավետարանը, բոլորը համբուրեցին...

Մարդուն առաջ չեն մատուցի, ամենեքեան որոշյալ դերանունը ենթակա է և ուղղական հոլովով էլ պետք է մնա, իսկ ողջունել այստեղ նշանակում է համբուրել: Փարպեցին մեկ այլ տեղ (էջ 150) դրել է՝ «առեալ զսուրբ Աւետարանն և զնշան կենսատու իսաչին՝ ողջունէր, զնելով անյագ ի վերայ բբաց աչացն և ճակատու»: Այս ճիշտ է թարգմանված:

ԲՆԱԳԻՐ

էջ 382

մնացորդք Արեաց աւագանւոյն

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

էջ 383

Արյաց ավագանու մնացորդները

ՊԵՏՔ Է ԼԻՆԻ

Արյաց մնացյալ ավագանին

էջ 388

Եւ խօսեալ զայս ամենայն բանս տեառն Արեաց Վաղարշու և ամենայն աւագանւոյն ընդ Վչնասպրատայ Նիխորոյ, և հրաժարեալ զնա արձակեցին ի Հայս:

էջ 389

Եվ այս բոլոր խոսքերն ասելով՝ Արյաց տեր Վաղարշն ու ամենայն ավագանին՝ Նիխոր Վչնասպրատի հետ միասին, նրան ճանապարհ դրին դեպի Հայք:

«Խօսեալ... ընդ Վչնասպրատայ Նիխորոյ» նշանակում է՝ խոսեցին

⁸ Հմմտ. Գ. Մ ա ն ու կ յ ա ն, Գրաբարի նախգիրները և նրանց գործածությունը Հայ պատմագրական երկերում (Մ-ՄԻ դարեր), Երևան, 2002, էջ 14-22, 77-160:

⁹ Այս և վերը նշված գրաբարյան բառերը նույնություններ թարգմանությունում մեջ թողնելու դեպքում պետք է որ տողատակին դրանց իմաստները բացատրվեն, ինչպես արել է Մ. Արեղյանը Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն թարգմանելիս:

¹⁰ Մատչիմ բայի անցյալ դերբայը կազմվել է պատճառականի երկրորդ հիմքից՝ մատուցեալ, որի մոտ ենթական դրվել է սեռական հոլովով:

(խոսելով) Վշնասուրբատ Նիխորի հետ (հաղորդման անուղղակի խնդիր) և ոչ թե «ասացին... հետ միասին»: Ձի թարգմանված հրաժարեալ (հրաժեշտ տալով) անցյալ դերբայը:

Նման թարգմանությունը ժամանակակից ընթերցողին է փոխանցում հեղինակային լեզվի ու ոճի ելևէջները՝ երկը հետաքրքիր դարձնելով նաև գրական-դեղարվեստական առումով: Ձէ՞ որ 5-րդ դարի պատմագրությունը ժանրային առումով սլատմագեղարվեստական արձակ է:

էջ 456

Եւ զանյս ամենայն կարիս կրեալ յանձն իւր յաղագս մեր...

էջ 457

Եվ այս բոլոր կարիք-կարիք=չարչարանք ներն իր անձի վրա առ-կամ տառապանք նելով մեզ համար...

էջ 434

Եւ եկեալ ինքն ի տեղի լսողութեանն աստիճանին, և տուեալ զխաղաղութեան ողջոյնն՝ ասէ.

էջ 435

Իսկ ինքը, գալով լսողության աստիճանի տեղը, խաղաղության ողջույն տալով ասաց.

Այստեղ «ի տեղի լսողութեանն աստիճանին» նշանակում է բեմ, կամ այն տեղը, որտեղից ասված խոսքը լսվում է: Եթե թողնվում է գրաբարյան այս կապակցությունը, անհրաժեշտ է ծանոթագրել:

Նատ են նաև գրաբարյան բառերի ու բառաձևերի սխալ թարգմանությունները:

ԲՆԱԳԻՐ

էջ 40, 46
խորիսխ մեղու

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

էջ 41, 47
մեղվի խորիսխ

ՊԵՏՔ Է ԼԻՆԻ

մեղրի խորիսխ

Մեղու մեղր բառի սեռականն է: ՆՀԲ-ն սույն օրինակները բերել է մեղր բառի տակ¹¹: Հմմտ. Սաղմոս, ԺԸ, 11:

էջ 62

յստակ և ականակիտ¹² վարդապետութիւն... Գրիգորի

էջ 63

...Գրիգորի հստակ և ականակիր վարդապետությունը

Գրիգորի հստակ և ականակիտ (անխառն, պայծառ) վարդապետությունը:

Ականակիր նշանակում է ոչ միայն ականներ կրող, այլև՝ շաա մութ, թանձրախավար, խավարչտին, որն անհարիր է Գրիգորի վարդապետությունը:

¹¹ Հմմտ. նաև Թիւք, ԺԱ, 8 (իբրեւ գխորիսխ իւղոյ և մեղու):
¹² ՆՀԲ-ն (հ. Բ, էջ 520) որպես բնագրային օրինակ քաղել է Փարպեցու գրքից:

էջ 66	էջ 67	
ճաշակեալ այլ բնաւ աւելի ինչ ոչ՝ բայց հաց և ջուր և աղ,	բնական ոչինչ չճաշակեցի, բացի հացից, ջրից ու աղից,	ամենևին ¹³ ոչինչ չճաշակեցի, բացի հացից, ջրից ու աղից:
էջ 66	էջ 67	
խորանածև	խորանարդածև	վրանածև, գմբեթածև
էջ 68	էջ 69	
ոսկէտեսիլ ¹⁴ գրով, ոսկեգիր	ոսկեգեղմ գրով	ոսկետեսակ (ոսկետիպ) գրով, ոսկեգիր

Մինչդեռ նույն էջում (էջ 69) մեկ այլ ոսկեգիր թարգմանված է ոսկե-նախշ, իսկ 78 էջում թողնված է նույնությամբ:

էջ 96	էջ 97	
Եւ ամենայն Արեաց...	Եվ բոլոր արիացիներն...	Եվ բոլոր Արիներն...
զարմացեալ...	հիացան...	զարմանալով...

ԲՆԱԳԻՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

էջ 408	էջ 409
Եւ եթէ էաք կացեալ միարանք և չէաք պառակտեալք և քայքայեալք՝ ծանուցանէաք եկելոցն ի վերայ մեր, թէ արդարև որպէս գԱրի՞ այր եմք, և կամ թէ որպէս գԱսորի, (Հմմտ. 1904 թ. հրատ., էջ 168):	Եթե միաբանած լինեինք և ոչ պառակտ-ված, ապա մեր վրա եկողներին արդարև ցույց կտայինք՝ արի՞ մարդիկ ենք, թե՞ ասորի:

Պարսկական ատյանում Վահան Մամիկոնյանի ասած այս խոսքի աշխարհաբար թարգմանությունում առաջարկում ենք երկու ուղղում՝

ա) Արի և Ասորի հատուկ անուն համարված բառերը գրել մեծատառով, ինչպես բնագրում է: Այստեղ Արի չի նշանակում քաջ, ինչպես կարծվել է. բնագրում բազմիցս Արի նշանակել է պարսիկ, պարսկաստանցի, որից էլ Արյաց աշխարհ: Հենց նույն էջում գրված է՝ «Դուք, որ Արիք էք»: Այս առթիվ ՆՀԲ-ն (Ա, 358) Արի(ք) գլխաբառի համար գրել է. «Այսպէս կոչէին զինքեանս պարսիկք և մարք, իսկ զօտարազգիս՝ Անարիս»:

բ) Անհրաժեշտ է թե՞ Ասորի կապակցություն վրայից հանել հարցական նշանը, ինչպես բնագրում է, քանի որ այս նախադասությունն ասողը հայ է և ցանկացել է հասկացնել, որ իրենք ո՛չ պարսիկ են և ո՛չ ասորի: Այսինքն՝ երկրորդ անգամ հարցական նշան չգնելը մեղմում է խոսքը և ավելի հաստատում խոսողի նաև ասորի չլինելու հանգամանքը:

¹³ Հմմտ. ՆՀԲ, հ. Ա, էջ 497:

¹⁴ ՆՀԲ-ն (հ. Բ, էջ 520) այս բառի համար բերում է Փարպեցու երկից սույն օրինակը և հղում ոսկետեսակ բառը:

- | | | |
|--|--|--|
| էջ 96
Եւ յորժամ Հայք սեր-
տիւ ¹⁵ մեր լինին | էջ 97
Իսկ երբ Հայքը սերտո-
րեն մերը լինի | Իսկ երբ Հայքը (Հայաս-
տանը) Հաստատապես (ան-
խզելիորեն) մերը լինի |
| էջ 144
Իբրև գրասական խոզաց | էջ 145
Իբրև խոզերի վտառ | Իբրև խոզերի բոլուք
(խումբ) |
| էջ 152
Կարգէր և զիւր դունդն
երանելի գորավարն Հա-
յոց Վարդան, ըստ բա-
ւականին այրուծիոյն
իւրոյ, ընդդէմ նոցա. | էջ 153
Հայոց երանելի գորա-
վար Վարդանը ևս իր
գունդը դասավորեց
նրանց դեմ: մեծաթիվ
այրուծին բաժանելով ե-
րեք մասի... | բաւականին = չափ, քա-
նակ (ըստ այրուծիու քա-
նակի) |

Փարպեցին այս տողերից անմիջապէս առաջ գրել է, որ Վարդանի գոր-
քերը «յոյժ սակաւք են», ուրեմն նա մեծաթիվ այրուծի չուներ: Մեկ այլ
տեղ (էջ 351) նույնպիսի կապակցութիւնը մոտավորապէս ճիշտ է թարգ-
մանված:

- | | | |
|---|---|--|
| էջ 162
Ի միջի նորա ածեալ դա-
կիչ բանակէին | էջ 163
այնտեղ վրան զարկելով
բանակեցին | ՊԵՏՔ Է ԼԻՆԻ
նրա միջև (այնտեղ) դիր-
քեր դնելով՝ բանակեցին |
|---|---|--|

Ստ. Մալխասյանցը (նշվ. բառարան, Հատ. III, էջ 183) այն բացատրում
է որպէս ամրացված դիրք, որտեղ զորքը բանակում է, դիրքի բանակ, դիրքի
ճակատ: Ըստ Լեոյի՝ դակիչ նաև բանակի շուրջը փորված խրամատ է նշա-
նակում¹⁶: Թարգմանիչը երկու տեղ (էջ 361, 365) այն ճիշտ է թարգմանել՝
որպէս բանակատեղ, դորակայան¹⁷:

- | | | |
|--|---|--|
| էջ 324
առնիցէք մեզ թողութիւն՝
դուք իշխեցէք. | էջ 325
մեզ ներողութիւն
կշնորհեք (չարունակու-
թիւնը չի թարգմանված
– Գ.Մ) | ՊԵՏՔ Է ԼԻՆԻ
մեզ թողութիւն կտաք
(կշնորհեք), դուք կիշ-
խեք. |
| էջ 382 (Քնն. բնագիր, էջ
158)
յերկրորդումն աւուր թաղա-
ւորութեանս Վաղարշու | էջ 383
Վաղարշի թաղավորութ-
յան երկրորդ տարում | ...երկրորդ օրում (օրը)... |
| էջ 392 | էջ 393 | |

...առաքեաց և Մամիկոնեանն Վահան Վահան Մամիկոնյանը նիխորի պատ-

¹⁵ Տպագրված է վրիպակով՝ սրտիւ:
¹⁶ Լ և ո, Երկերի ժողովածու, Հ. 2, Երևան, 1967, էջ 123:
¹⁷ Այս գրքի զրաբար բնագրում երկու անգամ վրիպակով տպված է դակիչ:

ընդ պատգամաւորսն նիխորոյ և յիւր ուխտակցացն զՅաշկուր Արծրունի և զՍահակ Կամսարականն, զԵրանելույ զԱրշաւրայ զորդի...

գամավորների հետ ուղարկեց նաև իր ուխտակիցներից Յաշկուր Արծրունուն. Երանելի Արշավիրի որդի Սահակ Արծրունուն:

Պետք է լինի՝ Սահակ Կամսարականին:

Վերոհիշյալ սխալներին, թերացումներին ու վրիպումներին ավելանում են նաև բնագրային դանազան աղավաղումներ: Այս կարգի սխալներն սկսվում են թարգմանություն հենց առաջին նախագասությունից:

ԲՆԱԳԻՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՔ Է ԼԻՆԻ

էջ 6

էջ 7

Ա. Սկիզբն առաջին գրոց պատմութեանն Հայոց, որում սկիզբն արարեալ պատմեաց ստուգիւ այրն երանելի Ագաթանգեղոս, սկսեալ ի մահուն Արտեւանայ յԱրտաշէյ յորդույ Սասանայ բռնաւոր Ստահրացուոյն.

Ա. Հայոց պատմության առաջին գիրքը, որն ստույգ ձևով շարագրել է Երանելի այր Ագաթանգեղոսը, սկսվում է Ստահրացի բռնավոր Սասանի որդի Արաաշի-րի որդու ձեռքով Արտևանի սպանությունից.

...սկսվում է Ստահրացի բռնավոր Սասանի որդի Արտաշի-րի ձեռքով...

Նշենք բնագրային մի փոփոխություն, որը կարևորվում է հատկապես այժմ, երբ նշվում է մաշտոցյան գրերի գյուտի 1600-ամյակը:

Հայտնի է, որ Փարպեցին ևս գրել է Հայոց գրերի գյուտի մասին՝ օգտվելով Կորյունի «Վարք Մաշտոցի» գրքից, սակայն երբեմն որոշ երևույթների տրվել է այլ բացատրություն: Իսկ երբ թարգմանությունում կատարվում է անհիմն փոփոխություն, ստեղծվում է վիճահարույց նոր թյուրիմացություն:

ԲՆԱԳԻՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

էջ 30

էջ 31

Զայս ի բազում ժամանակաց զմտաւ ածեալ երանելի առն Մաշտոցի, և փղձկացեալ յանձն իւր, մանաւանդ թէ գոն նշանադիրք Հայերէն լեզուոյս, որով Հնար է ինքեան ձայնիւ, և ոչ մուրացածոյ բարբառով, շահել զոգիս արանց և կանանց առ Հասարակ յամենայն եկեղեցիս բազմութեանն:

Եվ Երանելի այր Մաշտոցն այս մասին երկար ժամանակ խորհում էր ու լալիս իր ներսում. չէ՞ որ կային Հայերեն լեզվի նշանագրեր, որոնցով Հնարավոր էր սեփական ձայնով և ոչ թե մուրացածո լեզվով, եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և առհասարակ ամբողջ բազմության սրտերը:

Թվում է, թե ընգամենը ինչ-որ փոքր փոփոխություն է կատարվել. Գուլ (գոյություն ունենալ, լինել) սկսկասավոր բայի ներկա ժամանակը (Հոգնակի թիվ, երրորդ գեմք) փոխվել է անցյալ ժամանակով, այսինքն՝ «գոն նշա-

նագիրք Հայերէն լեզուոյս»-ը (կան Հայերեն լեզվի նշանագրեր) դարձել է «գոյին նշանագիրք Հայերէն լեզուոյս» (կային Հայերեն լեզվի նշանագրեր): Մինչդեռ Մանուկ Աբեղյանը Կորյունի «Վարք Մաշտոցի» գրքի իբր կազմած գիտական բնադրի և թարգմանութեան սկզբում տեղագրված «Մեսրոպ Մաշտոցը և Հայ գրի ու գրականութեան սկիզբը» խորաքննին ուսումնասիրութիւններում կարևորել է այս խնդիրը: Նա, նկատի ունենալով գրաբար բնադրի նշված հատվածը, գրել է. «Այս ցիտատի մեջ ընդգծված բառերի հիման վրա համարում են, թե Դանիելյան նշանագրերն եղել են հին Հայկական տառեր, և թե Մաշտոցն առաջուց իմացած է եղել այդ տառերի մասին: Դա էլ բնագրի սխալ հասկացում է: Փարսեցիներն չի գրում «մանավանդ Զի ԳՈՅԻՆ նշանագիրք Հայերէն լեզուոյս, որով Հնար էր...» – մանավանդ որ կային Հայերեն լեզվի նշանագրեր, որոնցով Հնարավոր էր... Նա իբրև ճարտասան Մաշտոցի մտածողն էր է բերում թեական ձևով «մանավանդ Եթե ԿԱՆ, (մտածում էր նա), Հայերեն լեզվի նշանագրեր...»¹⁸: Թարգմանիչն այս անհիմն փոփոխութեանը համահունչ կատարել է նաև բնադրի մեկ այլ «չտկում». «որով Հնար է... շահել...» դարձել է «որով Հնար էր... շահել...»: Այսինքն՝ գոն և Հնար է ներկա ժամանակները դարձել են անցյալ, որին հիմնավորապես դեմ էր Մ. Աբեղյանը: Կա նաև մեկ այլ թյուրիմացութիւն: Ինչպես գրել է Հր. Աճառյանը, մաշտոցյան գրերի գյուտի մասին Փարսեցու գրքում մի ընդարձակ հատված կա («Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1904, էջ 39-41), որը տառացի նման է Խորենացու գրածին («Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 326-327), դառնալով վիճաբանութեան առարկա, թե ով ումից է արտագրել¹⁹: Ըստ Աճառյանի՝ Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբան) ապացուցել է, որ 1774 թ. էջ-միաձևում ընդօրինակված և Փարսեցու գրքի տպագրութիւնների հիմք հանդիսացող մի ձեռագրում (ձեռ. Ե, Կարենյան, №1648) այս հատվածը Խորենացու գրքից հավելել է գրիչը: Ահա թե ինչու սույն թարգմանութեան հիմք հանդիսացող նշված գիտական բնագրում այս մասը հանված է բնագրից և գրված է ծանոթագրութիւնում²⁰: Սակայն այն հանիրավի (էջ 490-491, ծանոթ. 11) ներմուծված է արտատպված բնագիր (էջ 32-34), որից էլ կատարված է սույն թարգմանութիւնը: Արտատպված այս հավելման՝ գրերի գյուտի բուն պահանջը պատկերող հատվածում (էջ 32) անճշտութիւն կա, որը թափանցել է թարգմանութիւն:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, էջ 326

(Հմտ. Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 38-39)

...և տեսանէ ոչ ի քուն՝ երազ, եւ ոչ յարթնութեան՝ տեսիլ, այլ ի սրտին գործարանի, երեւութացեալ Հոգւոյն աչաց, թաթ ձեռին աշոյ՝ գրելով ի վերայ վիմի...

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ,

արտատպված բնագիր, էջ 32

...և տեսանէ ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ Հոգւոյն՝ թաթ ձեռին աշոյ գրելով ի վերայ

¹⁸ Կ ո ղ ու ն, Վարք Մաշտոցի, Երևան, 1981, էջ 15:

¹⁹ Հ Ր. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 34-37: Ե ձեռագիրն արտագրված է Ե ձեռագրից (Գևորգյան, №611), որտեղ այդ հատվածը գոյություն չունի:

²⁰ Այն չկա նաև Փարսեցու «Պատմութիւն Հայոց»-ի Համաբարբառում:

վիմի...

Արտագրված բնագրում բաց է թողնված աչք բառի հոգնակի տրակա- նը, որի հետևանքով թարգմանությունում հոգին դարձել է ենթակա, որը և աջ ձեռքի մի թաթով (sic) գրում է ժայռի վրա: Այժմ համեմատենք Ստ. Մալխասյանցի և Բ. Ուլուբաբյանի այդ հատվածի թարգմանությունները:

ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆՑ

(Նշվ. աշխ., եր., 1981, էջ 405)

Եվ տեսնում է ոչ երազ քնի մեջ, ոչ տեսիլք արթնություն մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռքի թաթ քարի վրա գրելիս...

Բ. ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

(Նշվ. աշխ., էջ 35)

Եվ տեսավ, — ոչ այն է երազ էր քնի մեջ, ոչ տեսիլք էր արթմնի, — այլ սրտի խորքերում երևութացյալ հոգին աջ ձեռքի մի թաթով (sic) գրում է ժայռի վրա:

Անճշտություններ կան նաև մեջբերված հատվածի շարունակությունում²¹: Եվ այսպես, թարգմանական թերացումները հաջորդում են մեկը մյուսին:

ԲՆԱԳԻՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՔ Է ԼԻՆԻ

էջ 140

...կարի հռչակին իբր ասպտամբուրթեանն

էջ 141

...ասպտամբուրթյան գործը հույժ հայտնի են գարձնում

...ասլստամբուրթյան գործը խիստ հռչակվում է

էջ 160

...երթեալք էին ի տուեսս իւրեանց՝ կատարել գտօնն գատկի առ ընտանիս իւրեանց,

էջ 161

...իրենց տներն էին զնացել, թե գատկի տոնը կատարեցեք ձեր ընտանիքների հետ,

...իրենց տներն էին զնացել՝ գատկի տոնը իրենց ընտանիքների հետ կատարելու,

էջ 164

զոր և յառաջագոյն ժամանակի... տեսանէին...

էջ 165

Առաջները մի ժամով... տեսան...

առաջներում, երբ..., ... (ավելի առաջ, երբ)

էջ 198

ի Հոռոմս արձակեաց

էջ 199

Ուղարկել էր Հոռոմ (Հմմտ. էջ 527, Տեղանունների ցանկ):

Ուղարկեց Հոռոմք

էջ 268

ի նետաձգութեանն զեղեցկաճիգք և զիպեցուցողք, յորս թեթևաշարժք և նախասպանք,²²

էջ 269

Նետաձգության մեջ նրանք զեղեցկաճիգ էին ու զիպուկ, նաև թեթևաշարժ և առաջինը հարվածող,

որս անելիս՝ (որսորդության մեջ) թեթևաշարժ էին և առաջինը հարվածող,

էջ 268

էջ 269

²¹ Հմմտ. սույն հատվածի՝ Մալխասյանցի և այս թարգմանությունները:

²² Խոսքը Մամիկոնյան տոհմից նահատակվածների որդիների մասին է:

զորոց ձանձրացուցանէին բազմածառայքն զանծառայիցն զգուրսն խնդրելով հանապազ զմիս այլ և այլ որսոց,

Շատ ծառաներ ունեցող պալատները նրանց՝ այգ քիչ ծառա ունեցողներն էին ձանձրացնում ամեն օր պահանջելով տեսակ-տեսակ որսերի միս...

Շատ ծառաներ ունեցողներն անհանգստացնում էին ծառաչունեցող նույն մարդկանց դուները, ամեն օր զանազան որսերի միս խնդրելով:²³

Ինչպես նկատելի է, «Պատմութիւն Հայոց»-ի առաջին թարգմանիչն ավելի ճիշտ է ընկալել այս հատվածի իմաստը, քան Բ. Ուլուբաբյանը:

ԲՆԱԳԻՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

էջ 354

Եւ ինքն չուեալ յՈքաղայ՝ իջանէր ի գաւառն Բասեան և բնակէր մօտ ի գեօղն որ անուանի Դու, ի դաշտին Աղբերականց, զոր Արծաթաղբերսն կոչեն:

էջ 355

Իսկ ինքը Ոքաղից իջավ Բասյան գավառը և բանակեց Դու կոչված գյուղի մոտ, որ Աղբերականց կամ Արծաթաղբերք դաշտում էր գտնվում:

Թարգմանիչը ծանոթագրել է, որ Աղբերականցը կամ Արծաթաղբերքը դաշտ է Բասեն գավառում (էջ 508, ծան. 129):

Գրաբար բնագիր կազմողներ Գ. Տեր-Մկրտչյանը և Ստ. Մալխասյանցը չեն ընդունել, որ Աղբերականքը տեղանուն է: Ահա թե ինչու նրանց բնագրում այն դրված է փոքրատառով (էջ 146), իսկ №9 ծանոթագրությունում նշել են, որ նախորդ տպագրություններում այն դիտված է հատուկ անուն, որն իրենք չեն ընդունում: Եվ քանի որ սույն թարգմանության հանդիպադրությամբ տպագրությունը վերցված է այդ գրաբար բնագրից, Աղբերականքը պետք է գրվեր փոքրատառով, իսկ հակառակ դեպքում թարգմանիչը պիտի ծանոթագրեր, թե ինչու է այդպիսի փոփոխություն կատարվել: Նման ուղղմամբ բնագիրը կարող ենք թարգմանել. «Ինքը շարժվելով Ոքաղից՝ իջավ Բասեան գավառը և բանակ դրեց այն գյուղի մոտ, որը կոչվում է Դու, աղբյուրաշատ (աղբյուրաբուխ) մի դաշտում, որը Արծաթաղբերք է կոչվում»:

Թարգմանական որևէ անճշտություն կարող է խաթարել շարադրանքի տրամաբանական կապը: Օրինակ՝ (Շապուհ) «եւ կացեալ ժամանակս ինչ անխօսս» (էջ 374) նշանակում է՝ (Շապուհն) «ինչ-որ ժամանակ մնալով անխօս», իսկ մի քիչ ժամանակ անճիշտ թարգմանությունը հակասություն է ստեղծում հաջորդ բացատրության հետ՝ «եւ զգացեալ յետ բազում ժամուկց...», այսինքն՝ «եւ շատ ժամեր հետո ուշքի գալով... հարցրեց...»:

«ԹՈՒՂԹ», ԲՆԱԳԻՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

էջ 458

Յորո՞ւմ պատուհասի քսան և չորք հազարք արանց ի միում աւուր անկան ի ժողովրդենէն Տեառն: Ամոն

էջ 459

Ո՞ր մեղքի համար Աստծո ժողովրդից քսանչորս հազար մարդիկ մեկ օրվա մեջ մեռան անմիտ խոսքե-

երկու տարբեր նախադասություններ հանդիսանալով միացվել են, քիչ անկախություն բառը

²³ Թարգմանությունը Մ. Տեր-Պետրոսյանցի, էջ 237:

ն'չ ապաքէն վասն անհան- ըի համար, բազմաթամա- սիտամամբ դարձված է
 ճար խօսիցն բազմաթամա- նակյա ինքնակալության ինքնակալությունն:
 նակեայ քինակալութեամբ պատճառով չէր, որ Ա-
 սպանաւ յեղբօրէն: մոնն սպանվեց իր եղբօ-
 րից:

էջ 458

էջ 459

Իսկ զարմանալի զառնէն զԵղիայէ ո՞նք
 բաւական իցէ ասել բանիւ գգովութիւն,
 որ ի մարմնի զանամարմնոցն բերելով
 գքաղաքավարութիւն՝ հրեղէն կառօք ի
 հոգեղէնսն վերացաւ ի կեանս:

Իսկ ո՞վ կարող է խոսքով սպառել գո-
 վասանքն այն զարմանալի այր Եղայի,
 որ երբ մարմնի մեջ էր, անմարմինների
 պես ապրելով՝ հոգեղենների հետ կյան-
 քից հեռացավ հրեղեն կառօքով:

Թարգմանությունում ճիշտ չի ընկալվել ի+հայցական կառույցի դրսևո-
 րած իմաստը, որի հետևանքով էլ ստացվել է իբրև թե Եղիան հոգեղեննե-
 րի հետ կյանքից հեռացել է: Ի նախդիրը հայցական հոլովի հետ ոչ թե
 միասնության, այլ ուղևորման (ուղևորման հայցական) գաղափար է ար-
 տահայտել: Այդ է մասնավորապես հաստատում Աստվածաշնչի համապա-
 տասխան հատվածը (Դ. թագ, Բ. 11): «...եւ ահա կառք հրեղէնք եւ երի-
 վարք հրեղէնք, եւ անջրպետեցին ի մէջ երկոցունց. եւ վերացաւ Եղիա
 շարժամբ յերկինս»):

Ինչպես տեսնում ենք, այստեղ Եղիան որևէ մեկի հետ երկինք չի վերա-
 նում: Այսինքն՝ Եղիան ոչ թե հոգեղենների (հրեշտակների) հետ է կյան-
 քից հեռացել, այլ վերացել է գեպի հոգեղենները, դեպի հոգեղեն կյանքը:
 Հնարավոր է նաև, որ վերջին բացատրությամբ հոգեղէնսն ածականական
 կիրառություն ստացած լինի, որի պատճառով էլ դրվել է ոչ թե առ, այլ ի
 նախդիր²⁴: Այս հատվածը կարելի է թարգմանել այսպես՝ «Իսկ զարմանալի
 այր Եղիայի մասին ո՞վ կարող է դովեատի սպառիչ խոսք ասել, որը, մարմ-
 նի մեջ, անմարմինների պես առաքինությամբ ապրելով, հրեղեն կառքով
 դեպի հոգեղենների կյանքը վերացավ»: Լավ չի ձևակերպված՝ «երբ
 մարմնի մեջ էր», քանի որ նա միշտ էլ մարմնավորված է եղել և այդպես
 էլ հրեղեն կառքով երկինք է վերացել: Երբեմն էլ շփոթվել են բայի ժամա-
 նակները, որի պատճառով առաջացել են թյուրիմացություններ²⁵: Կան
 նաև անհաշիվ թարգմանության օրինակներ. «...բարձր յերկրէ մինչև յեր-
 կինս» (էջ 72) դարձել է «...բարձր երկրից մինչև երկինք» (էջ 73), փխ.
 «երկրից բարձր մինչև երկինք»: «Պատասխանի արարեալ» (էջ 232), «սլա-
 տասխանը տվեց» (էջ 233), փխ. «սլատասխանեց» և այլն:

Բազմիցս նկատի չեն առնվել սեռականով ավելադրությունները, վերա-
 ցականը՝ թանձրացականի փոխարեն գործածությունը, նախդիրների հա-
 մապատասխան կիրառությունները:

Բնագրի 1904 թ. հրատարակումից հետո բանասիրական, բնագրագիտա-
 կան ուղղորդավ ճշգրտումներ են կատարվել, սակայն դրանք բոլորովին
 անտեսվել են թարգմանչի կողմից:

²⁴ Գ. Մ ա ն ու կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 128-157:
²⁵ Տե՛ս էջ 141, վ. 7, էջ 157, վ. 17, էջ 219, վ. 13 (հմտ. գործք Առաք., Ա. 13, Ի. 8) և
 այլն:

Այսպես, չր. Աճառյանն առաջարկել է մի քանի բնագրային ուղղում²⁶, որոնցից է նաև գունդն Վահևունեաց փխ. Գիւտն Վահևունեաց: Վարդան Մամիկոնյանի հետ Աղվանք գնացող նախարարների թվում տպագիր բնագրում հիշատակվում է նաև Գիւտն Վահևունեաց (էջ 148), ձեռագրում և Եղիշեի երկում գրված է գունդն Վահևունեաց²⁷: Իհարկե, Գյուտն Վահևունին Վարդանի հետ Աղվանք գնալ չէր կարող, քանի որ այդ ժամանակ անցել էր Վասակի կողմը. Վահևունիք բաժանվել էին երկու մասի: Թարգմանիչն ինչպես մյուս, այնպես էլ բնագրային այս ճշգրտմանը չի անդրադարձել:

Ուշագրավ է նաև մեկ այլ փաստ:

Հայտնի է, որ Փարպեցու երկերի մեղ հասած ամենահին ձեռագրերը 17-18-րդ դարերի են (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2639, 1672 թ., № 1891, 1771 թ.): Հետևաբար նախորդ դարերի ձեռագրային որևէ հայտնաբերում կարևորվում է: Այգպիսի փաստ է արձանագրված Պ. Մուրադյանի և Կ. Յ. Յուղբաշյանի «Ղաղար Փարպեցու Պատմության նորահայտ պատահիկը» հոդվածում²⁸:

Երբեմն այնպիսի ծանոթագրություններ է կազմել, որոնք ոչ թե փաստերով բացատրում և հիմնավորում են բնագրային որևէ հատված, այլ մնում են որպես լուր ենթագրություն: Օրինակ՝ այդպիսին է 28-րդ ծանոթագրությունը (էջ 494), որտեղ փորձում է ենթագրությամբ ժխտել Պ. Մուրադյանի ուշագրավ բացատրությունը Սաղմոս ԺԶ, 14 տողի՝ Փարպեցու հավելման վերաբերյալ («Յագեցան կերակրօք, ասէ, - որ միւս ևս թարգման խոգենեալ ասէ, - և թողին զմնացուածս տղայոց իւրեանց»²⁹):

Ենթագրության վրա են հենված նաև բնագրի մի հատվածի (էջ 378) և՛ թարգմանությունը (էջ 379), և՛ ծանոթագրված բացատրությունը (էջ 510, ծան. 140): Ըստ որում՝ ծանոթագրումն ավելորդ է, իսկ թարգմանությունը՝ ուղղելի: Պատմում են, որ գոռոզ Պերոզը, ի պատասխան հեփթաղների առաջնորդի սպառնալիքի, ասում է նրա ղեսպանին. «Ձայս բազմութիւն գնդին, զոր դուք տեսանէք՝ կիսովս ընդ ձեզ կուռիմ և կորուսանեմ, և կիսով զհող տեղացի, ուր դու լինիս՝ կրել տամ, ո՛ր ի ծովն և ո՛ր ի փոսն, զոր հատին՝ լնումք»:

Թարգմանություն, էջ 379. «Ձորքերի այս բազմությունը տեսնո՞ւմ եք: Սրանց կիսով ձեզ հետ կկուլվեմ և կհաղթեմ, իսկ մյուս կիսով, ուր որ դու ես, այդ տեղերի հողը կրել կտամ, կլցնեմ ծովը և այն փոսը, որ կտրելու ես»:

²⁶ «Արարատ», 1911, մարտ, էջմիածին, էջ 225-229:

²⁷ Եղիշեի գրքի գիտական հրատարակությունում Գիւտն Վահևունեաց, ձեռագրերում գունդն Վահևունեաց (նշվ. աշխ. Երևան, 1957, էջ 99):

²⁸ «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1973, № 11, էջ 7-32, ըստ որի նախկին ՍՍՀՄ արևելագիտության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի ձեռագրերի հայկական հավաքածուում պահվող A-82 համարը կրող ձեռագրի կազմի մագաղաթյա պահպանակը (1 էջ) վերցված է Փարպեցու Պատմության չպահպանված մի ձեռագրից (ըստ այդ էջի՝ X-XI գրքեր): Հեղինակներն այն բառ առ բառ վերծանել են, քննել, հանգամանորեն համեմատելով 1904 թ. տպագրված բնագրի հետ, գտել տարբերություններ, անգամ բառարաններում չարձանագրված նոր բառեր: Ցավոք, այս հոդվածը ևս անտեսել է թարգմանիչը:

²⁹ Հմմտ. Պ. Մուրադյան, Ղաղար Փարպեցու մի տեղեկություն պատմա-մշակութային նշանակություն. - «Էջմիածին», 1980, Ա, էջ 57:

Թվում է՝ ամեն ինչ պարզ է, բայց՝ ոչ թարգմանչի համար: Նա դիմում է գրքի առաջին թարգմանիչ Մ. Տեր-Պետրոսյանի գրածին և ավելացնում. «Սակայն թվում է՝ այստեղ պակասում է ինչ-որ բան, քանի որ անիմաստ է կտրելիք փոսը նույն տեղի հողով լցնելը (էջ 510): Նախ՝ չի ընկալվել չափազանցությունը ստեղծված փոխաբերական պատկերը, այնուհետև՝ պետք է ճշգրտել թարգմանությունն այսպես. «Զորքերի այս բազմությունը դուք տեսնում եք. կիսով կկռվեմ ձեզ հետ և կորուստի կմատնեմ, իսկ [մյուս] կիսով քո եղած տեղի հողը կրել կտամ, կլցնեմ ո՛րը ծովը, ո՛րն այն փոսը, որ փորելու են»: Այնուհետև Փարպեցին գրում է այդ փոխաբերական փոսի մասին, որ փորեց Պերոզն իր, իր ծառաների և ամբողջ Արյաց համար, քանի որ դաժան պարտություն կրեց: Գրաբար բնագրերում և աշխարհաբար թարգմանությունում կան վրիպակներ, մինչդեռ գրքի վերջում ոչ մի ուղղում չի տրվել:

Ինչպես երևում է, թարգմանիչն շտապել է, իսկ հրատարակչությունն էլ նպաստել է, որպեսզի օր առաջ տասը հազար տպաքանակով լույս տեսնի այս թերակատար գիրքը, մինչդեռ մեր հին և միջնադարյան հեղինակների, առաջին հերթին պատմիչների գործերը սկսած է թարգմանվեն ճշգրտորեն, մանավանդ որ աղավաղված թարգմանությունները կարող են հիմք հանդիսանալ նաև օտարալեզու թարգմանությունների համար: Զարմանալի է նաև, որ այս գիրքը չի ունեցել մասնագետ խմբագիր, որը կարող էր կանխել նշված և մյուս սխալների մի զգալի մասը:

ОБ ОБСТОЯТЕЛЬСТВАХ ПОСЛЕДНЕГО ПЕРЕВОДА СОЧИНЕНИЙ ЛАЗАРЯ ПАРПЕЦИ НА ВОСТОЧНОАРМЯНСКИЙ

ГУРГЕН МАНУКЯН

Резюме

Труды выдающегося историографа и оратора V в. Лазаря Парпеци были изданы в переводе Б. Улубабяна с грабара на восточноармянский в 1982 г. издательством Ереванского университета. В этом переводе есть многочисленные неточности историографического и текстологического характера. Иногда это результат грамматических искажений (например, в использовании предлогов) в грабаре. Кроме того, переводчиками не были учтены важные уточнения, внесенные исследователями после публикации текстов историографа в 1904 г.

Все это было выявлено при сравнении нами, по заказу издательства "Айастан", перевода с подлинником на грабаре. Однако, отредактированный в

* ՊՐԷ-ի խմբագրության կողմից. Ցավով պիտի ընդգծել, որ մասնագիտական քննարկում, խմբագրում և գրախոսում չունենալու պատճառով անկարելի սխալներով են հրատարակվել նաև Հովհան Մամիկոնյանի, Ասողիկի, Վարդան Արևելցու պատմագրությունների աշխարհաբար թարգմանությունները:

1990 г. перевод издан не был. В данной статье приведены основные замеченные нами исправления.

THE CIRCUMSTANCES OF THE LAST TRANSLATION OF GHAZAR
PARPETSY'S "HISTORY OF ARMENIA" INTO EASTERN ARMENIAN

GURGEN MANUKYAN

S u m m a r y

The translations of the works by outstanding historiographer and orator of the 5th century Ghazar Parpetsy from Grabar into Eastern Armenian were published in the translation of B. Ulubabyan by Publishing house of Yerevan State University in 1982. There are many mistakes of historiographical and textological character in the translation. Sometimes it is the result of grammar distortions (eg, in the use of prepositions) in Grabar. Besides, some important corrections done by the investigators after the publication of texts of the historiographers in 1904 were ignored by the translators.

All that was revealed in the comparison of the translation of the original in Grabar done by us by the order of the Publishing house "Hayastan". However, the translation edited in 1990 was not published. In this article some main corrections noticed by us are brought.